


ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պոլիտիկոյ Համար
ճարեկան Ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՍԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՍԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրահարակոյի հարաք տերը : Մա-
նուցմակ տոր 10 Սանդիմ : Եկու քիւ ա-
նաջ հրահարակոյած քերք 40 Սանդիմ :
Չհրահարակոյած գրութիւնը եւ յճուիւր :

Հարցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNА

ԱԶԳԱՅԻՆ

ՏԵՐՈՒՆԵԱՆԻ ՇԻՐԻՄԸ

Կը լսենք թէ մէկ քանի պատուա-
ւոր անձինք Վառնաի մէջ հանգանա-
կութեան մը պիտի ձեռնարկեն, Կաթո-
ղիկոսական նախկին այցելու հովիւ ու-
բացեալ Մկրտիչ Վ. Տէրունեանի գերեզ-
մանին վրայ վայելուչ մահարձան մը
կանգնելու համար :

Կը յուսանք որ Պուլկարահայ գաղ-
թականութիւնը սիրով պիտի յօժարի
մասնակցելու՝ ամենուն սիրելի եղած
հովուի մը յիշատակը յարգելու համար :

— Այն. Մի. քայել էք. Յակոբեան՝ ըստ
իւր բարի սովորութեան այս տարի ալ
Ծննդեան տօնին առթիւ 10 օսմ. ոսկի
նուիրեր է. Սամաթիոյ ազգատաց փայտ
և ածուխ բաշխելու համար :

— Դարակէօմրիկի եկեղեցւոյ Ս. Աստ-
ուածածնայ պատկերին առջև դրուած
գանձանակը բացուեր և պարունակու-
թիւնը գողցուեր է :

Հանգուցեալ նուպար բաշաի մար-
մինը՝ Ազեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս
եկեղեցիին պարտէզը իր եղբօր Առա-
քել պէյի գերեզմանին քով պիտի թաղ-
ուի :

— Ֆիլիպէի մէջ Դաշնակցականաց ու
Արմենականաց կուսակցական կուռը այն
աստիճան սաստկացեր է որ ոստիկանու-
թիւնը միջամտեր ու Ծնունդին օրը
երկու հակառակորդ վարդապետները ի-
րենց խուցերուն մէջ բանտարկելով,
դռներուն առջին պահակ զինուորներ
դրեր է, նորագոյն խռովութեանց տեղի
չի տալու համար :

Քրիստոս իր աշակերտներուն « զխա-
ղաղութիւն տամ ձեզ », ըսաւ, ասոնք ալ
ժողովուրդին « զխռովութիւն տամք ձեզ »
կըսեն կոր : Կեցցեն... :

Այս շաբթուան Պոլսական թերթե-
րու հրատարակած պաշտօնաբաշխու-
թեանց ցանկէն կը տեղեկանանք թէ,
Վառնաի առևտրական փոխանորդ Բէ-
ֆիզ պէյ մեկնոյն պաշտօնով Բէօսթէն-
ճէ փոխադրուած ըլլալով, անոր յաջորդ-
կարգուած է Քէրմանշահի հիւպատոսա-
կան փոխանորդ Մէմուհ պէյ :

Հանգուցեալ Նուպար Բաշա երեք մի-
եօն ֆր. կտակած է հայ աղքատներու և որ-
բերու համար: Կտակակատարն է իր որդին
Վսեմ. Պօղոս Բաշա:

Այս առաւօտ Սօֆիայէ առնուած հե-
ռագրի մը նայելով, Նախարարապետ Պ. Սթոյի-
լօֆ հրաժարական տուած է:

— Պատրիարքներէն սկսեալ բազ-
մաթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ
ու աթոռակալներ, ցաւակցական հեռա-
գիր և հոգեհանգստեան աղօթքներով
լեցուն նամակներ կ'ուղղեն եղեր ոչ-
բացեալ Նուպար Բաշայի ապարանքը,
անշուշտ հասկցնելու համար թէ՛ իրենց
«յիշեալ և ջիւք» բաժինը չի մոռցուի:

— Սեփաստիոյ առաջնորդ Պետրոս
եպիսկոպոս ալ մինակ «Փարատեա» գոյ
ընող տղիկն ալ մը անճարակները անց-
եալ շաբթու ելեր քահանայ ձեռնադ-
րեր է: Տէրը ինք ողորմի ատոնց ձեռ-
քը իյնալիք ժողովուրդին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր.

Կը խնդրենք, Ձեր Հանդէսին մի-
ջոցաւ տեղեկութիւն տալ մեզ թէ, ի
նպաստ պարտուց բարձման աղգային
վարժարանաց տրուած պարահանդէսին
վերջնական հասոյթը որչափ էր, և թէ
նոյն պարտքը տալու մասին ի՞նչ տնօ-
րէնութիւն եղած է: Կը խնդրենք նաև
իմացնել թէ, տիկնանց ընկերութեան
մէկ քանի անգամ խոստացուած վիճա-
կահանութիւնը ե՞րբ տեղի պիտի ունե-
նայ:

Ձեր բաժանորդներէն
Մ. Յ. Ս

Հայելի — Ասոնց պատասխանը՝ Կար-
գադիր մասնախումբէն կը սպասենք:

ԱԶԳ.

Ամսոյս 17. յառաջիկայ կիրակի օ-
րը տեղւոյն Ս. Սարգիս եկեղեցւոյն մէջ

տեան պաշտօն պիտի մատուցուի հան-
գուցեալ Վսեմ. Նուպար Բաշայի համար:
Հանդիսաւոր Պատարագ և հոգեհանգս-
Ուստի այս առթիւ կը խնդրուի յարգոյ
հասարակութենէն, որ հաճին սոյն հան-
դէսին ներկայ գտնուիլ:

Ի դիմաց Աղգ. Երկո. Վարդ.

99 Յնվ. 15

Հոգաբարձութեան

Վառնա

Լտենդպ.

Լտենդպ.

Գ. Կիրպէսէսեան Յ. Մ. Թոյնաշեան

Կարգաւ վերջին երես «Բաղմալէպոյի
և «Հանդէս Ամսօրեայի» ազգերը:

ՖԻԼԻՊԵԻ ԿՈՒԻԸ

«Ս. Մն. դեան պէս նուիրական և ե-
րիցս պատկառելի տօնի օր մը Ֆիլիպէի
մէջ պատահած անօրինայ խայտառա-
կութեա ց մասին հետզհետէ մա՛րա-
մասնութիւններ կը հասնին, իւրաքան-
չիւրն իրողութիւնը խոստովանող: Վառ-
նաի հայ թերթերը անով կը զբաղուին,
երկարօրէն: Մենք, թէ՛ «Հայելի» ան-
ձուկ էջերուն պատճառաւ չենք ուզեր
ընդարձակ ըսի ըսիրներով թերթը լե-
ցունել և թէ՛ այս կամ այն կողմը ար-
դարացնել: Եւ պիտի ըսենք այն՝ ի՛նչ
որ ճշմարտութիւնը և ժողովուրդին շա-
հը կը պահանջէ:

«Ֆիլիպէի մէջ կուսակցութիւն կայ
եղեր, իրարու հակառակ խմբակներ կան
եղեր և ատոնք իրարու հետ կուսիլ կ'ու-
ղեն եղեր, մեր ըսելիքը այդ չէ, մեր
խօսքը՝ Քրիստոսի ցուպը ձեռքերին առ-
նող և ժողովուրդին սէր և խաղաղութիւն
քարոզելու պաշտօնը ունեցող վարդա-
պետներուն համար է, որոնք, թերեւ
կուսակցականներու կողմէ իրենց համար
լարուած թակարթը տեսնելու անկարող,
առանց խղճահարուելու իրենց սուրբ և
վսեմ պարտականութեան մէջ, Ս. Մը-
նունդի պէս մեծ տօնի օր մը կեղեկութեամբ
բղքտելու, հաւատոյ ջերմեռանդ ժողո-
վուրդը պառակտելու, եկեղեցւոյն ժո-
ղովրդեան խաղաղութիւնը վրդովելու:

մինչև անդամ պատճառ դառնալու ուստիկանական միջամտութեան, որ կը ըստիպուի զիրենք խուցերու մէջ բանտարկելու: Ամօթ բան չէ՞ այս: Եթէ մինչև իսկ իրաւացի ալ էին իրենց կարծիքին մէջ, պէտք էր զոհողութիւն ընեն, համբերատար ըլլալին և եկեղեցին մէջ չի խառնէին:

«Հիմա, ցաւը կամ վերքը որքան ալ խոշոր է, պէտք է հոգ տանիլ անոր դարմանին համար: Փիլիպէի ոչ թէ այդ կուսակցականներուն, որոնք գուցէ իրենց մասնաւոր հաշիւները ունին, այլ կոչում կընենք այն դասակարգին, որոնք իրեց լրջամտութեամբ և քիչ մը լայն հայեացքներովը ազգին և եկեղեցւոյ սրբութեանց նախանձախնդիր ըլլալ կ'ուզեն, այդ երկուքը մէկանց հեռացնել ազգէ, եւ առանց անտարբերութեան, Փիլիպէի նման բազմահայ քաղաքի մը ազգային և եկեղեցւոյ պատիւը պաշտպանելու են: Մեր ողջ առաջարկը ըստ ինքնին որքան անկեղծ ըլլալը կրնան հասկնալ միայն անոնք, որ գիտեն թէ ազգային հանրական շահ ըստա՞ծ որն է, և թէ ուշ կամ կանուխ գործը վերջապէս մեր այս ըսած ձեռով պիտի կրնայ լուծուի գտնել:

«Որքան կանուխ կարգադրութիւն, այնքան շուտ խաղաղութիւն»:

ԾԱՆՕԹ

ՍՕՔԻՆ ԲԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

Բանգամ ըլլալով Զուեվար Ցին բաշուած վիճակահանութենէն շահող թիւերն են

Թիւ	Ֆր.	Թիւ	Ֆր.
16552	35000	1734	300
5487	5000	2438	" "
454	3000	3315	" "
17600	2000	13273	" "
5266	1000	14981	" "
2553	500	23042	" "
23541	" "	28185	" "
25893	" "	33275	" "
28007	" "	44287	" "
32542	" "	46009	" "

Ասոնցմէ զատ, 1380 թիւեր ալ 60ական ֆրանք շահած են:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Վառնա

Արմատատունին աշխատութիւնները մասամբ ընդհատեցան մինչև Մարտ. երբ ծառերը ծաղկին, արմատներն ալ պիտի սկսին խաղարկուիլ: Արսեն Թէ մինչև այն ատեն արմատախնդիր պարոնը՝ իր երկու արմատախոյղ սեփոքերն ժենեռալներով երկու օրուան յիշիկի հացին արմատը քտնել պիտի աշխատի, որով գործը ըստ բուսականին դիւրացուցած պիտի ըլլան եղեր: Յաջողութիւն:

Այս շաբթու Շարժումի խմբագրատուն մէջ անակնկալ շարժումներ տեղի ունեցան: Պ. Գ. — Ա. ալ յետ տասնամեայ ժուկարութեան՝ հրաժարեցաւ խմբագրութենէն: (Զի 199ի բանն որ ասացաւ ի ժամանակի, ի ձեռն Բոժոժիկեայ կայծակնամարտի մարգարէիս, Թէ Շարժում, հակառակ իր մեծագործը յայտարարութեան, սեպհակնուցութիւն չէր Պ. Գ. — Ա. ի. Շաւարշներու և Շաւասպներու, այլ օւկանն էր յեղ. կուսակցութեան մը մէկ ներկայացուցչին, որ ըստ օրինի տէր և իշխանն է անոր, և որուն խմբագիրները ովքեր որ լինին, էլի չեն կարող լինում անկախ, այլ պարտաւորուած են հէնց մեքենայաբար հնազանդիլ և ըստ յօրքայիս կանն հրահանգի շարժում ընել:)

Արսեն Թէ «Իրաւունքի խմբագիրներէն մին հրաւիրուեր է խմբագրութիւնն ըստանձնելու, սակայն նոյն շրջահայեցութեամբ մտածելով և ուղիղ գատելով «ոչ կամիմ» պատասխաններ է:

Վերջապէս, Պուլիարիոյ հայապուկարութիւնացի մամուլին Թայմըլը համարուող «Բուայֆիւս-Իրաւունք-Հոգուգ» եռանուն և մեծածաւալ թերթին Ա. և Բ. թիւերը հրատարակուեցան: Արսեն Թէ այս առթիւ ջերմ բարեմաղթութիւններ եղեր և... հաւ յը մարթուեր է տպարանին գրանը առջին: Արսեն նաև Թէ միացեալ խմբագրութիւնը խոստացեր է խորոված պարարտ սագ մը և 100 հատ յուշկա(պղպեղ) թուրշուսի նուիրել տըպարանի պաշտօնեաներուն, որոնք ամեն ջանք ի գործ պիտի դնեն չորեքշաբթին թերթը ուրբաթ, շաբաթինն ալ երկուշաբթի գիշեր հրատարակելու համար:



ՀԱՐՑՔ

ԱՌ ԱՐՁԱՅԱՆՔ

- Ծանրաբարոյ եւ խոհական
Ձեռն մեր կուսանք անբարոյքոյ . . .
... — Ո՛հ :
- Ձեռն փութար միշտ տալ սրտստիս
Համեստութեան ճայնին ի կոյ . . .
... — Ո՛հ :
- Մտնե՛ք ի մէջ անոնց ունկան
Քարոզչին խրատն յեկեղեցոյ . . .
... — Ո՛հ :
- Լա՛ւ.— Խեղճ ջունի՛ն մեր հայկական
Կարգ մը կանայք, աղփատ քե ջոյ . . .
... — Ո՛հ :
- Հընազանդի՛ն իրենց երկան
Իբրեւ իրենց միակ տիրոյ . . .
... — Ո՛հ :
- Գիտե՛ն փակել իրենց քերան
Կամ խօսիչ ի վայել տեղոյ . . .
... — Ո՛հ :
- Սեր գոյանա՛յ քոռն, տեսական
Երբեք ընդ մէջ հարս ու կետոյ . . .
... — Ո՛հ :
- Երբ կին օտար իշխէ ի տան
Մնա՛յ սեր ընդ մէջ եղբոր քրոյ . . .
... — Ո՛հ :
- Այր փորձառու եւ խոհական
Պարսի՞ք անտալ խօսքին կրկնոյ . . .
... — Ո՛հ :

Ա.

ԿԱՆԱՑԻ ԿԵՂԵԻՔՆԵՐ

Շատ անգամ, էրիկ մարդոց պէս,
տիկնանց ալ իրարու հետ տեսակցած
ժամանակ՝ մէկզմէկու ցուցուցած քաղա-
քավարութեան բոլորովին կեղծ ըլլալը
հաստատելու համար, տան մը մէջ ան-
ցած հետեւեալ խօսակցութեան պէտք է
ունենդիր ըլլանք :

Մայր եւ աղջիկ :

Աղջիկը— Կարծեմ թէ այսօր տի-

կին հողակաթ մեզի այցելութեան պի-
տի գայ .

Մայրը— Ի՛նչ մեղքս պահեմ, ես ալ
այդ կնոջ ամենեին համակրած չեմ :

— Ձի նայի՛ս, իմ ալ շատ սիրա-
կանս էր, աւելի ուրախ կըլլամ եթէ
չի գայ :

— Խրոխտ հով մը կայ վրան, հա-
պա աղջիկը . . . արդեօք աշխարհիս վը-
րայ իմէ՛ք աղւորը կայ :

— Անցեալ օր փողոցին մէջը տե-
սայ զինքը . այն աստիճան քսուեր էր
որ . . .

— Ղուն քսուելուն ի՛նչ կը նայիս,
միւսիւ ֆինքֆօնքը վրան կը մարի կոր :

— Ի՛նչ ընեմ .

— Ի՛նչ ընես մի՛. թող քեզի օրի-
նակ ըլլայ . առիթը ձեռքէ փախցնելու
չէ :

(Այս միջոցին սպասուհին գալով,
տիկին հողակաթի աղջիկանը հետ գա-
լուտը կիմացնէ) :

Մայր եւ աղջիկ, անմիջապէս վազե-
լով կը գիմաւորեն հիւրերը :

— Ա՛հ, խըյանէթ, մեզի այսչափ
ժամանակ մոռնալ կըլլայ մի ես :

— Կը հաւատա՞ք տիկին . շատ կը
փափագինք որ բարեկամներնուս այցե-
լութիւն տանք, բայց ժամանակ չըլլար
կոր . ինչպէս որ գիտէք, մեր Բուզիկ
աղան տեղւոյս սովորութեանը համեմատ
ցորեկուան ճաշը կուգայ տունը կուտէ
ու յետոյ կը մեկնի, անկէ ետքը մինչեւ
որ պատրաստուինք դուրս իյնանք կը-
սենք նէ՛ օրն իրիկուն կըլլայ կոր :

— Իրաւունք ունիք, ճշմարիտ է,
հաւատացէք թէ շատ կարոտցեր էինք
զձեզ . մեզի համար մօտ ազգականի մը
մը պէս էք :

— Մենք ալ զձեզ իբրեւ քոյր ըն-
դունած ենք .

— Շնորհակալ ենք, այն ձեր աղ-
նուութիւնն է :

— Օրիորդ, դուք ի՛նչպէս էք, ա-

դէ՛կ էք . . , անցեալ օր ո՛վ էր ըստղը որ քիչ մը պաղ առեր էք եղեր , այն աստիճան սիրտս ցաւեցաւ որ իբր թէ ես հիւնդցած ըլլայի :

— Շնորհակալ եմ օրիորդ ձեր այդ զգացումէն , այնչափ հոգ ընելու բան մը չէր . պղտիկ պոօնը՛ս մը :

— Միւսիւ Պողոսիկը ի՞նչպէս է , աղէ՛կ է :

— Իրաւոր չաբաթ մըն է տեսած չենք . ե՞րբ էր չեմ յիշեր , եկաւ ըսաւ թէ ակռանիդ կը ցաւի եղեր . այն աստիճան հնհնուքի մէջ մնացի որ , դըժբաղդաբար մէկն ալ չի կայ որ շրկենք տեղեկութիւն առնենք :

(Այս միջոցին սպասուհին թէյսմանըն ու գաւաթները բերելով՝ մէջտեղի սեղանին վրայ կը դնէ) :

— Տիկին , թէյը կաթով կը խմէք թէ քօնեաքով :

— Ես՝ առանց կաթի ե առանց քօնեաքի կը խմեմ . բայց դուք մի՛ յոգնիք մատմազէլ , թող Եւփիմէս լեցնէ :

— Կը վայլէ՞ :

— Ի՞նչ կըլլայ . միթէ մենք օտարակա՞ն ենք :

Վերջապէս , թէյը խմուելէն ու քիչ մ'ալ արդուզարդի վրայ խօսակցելէ ետքը հիւրերը կը մեկնին :

— Ի՞նչ . . . կարծես թէ սրտիս վրայէն քաղ մը վերցուցին :

— Ո՛հ , մայրիկ , այսօրուան պէս տաղտուկ զգացած չէի :

— Եթէ սխալելով « իրիկուան կերակուրին կեցէք » ըսէի , պիտի կենայի :

(Անդին տիկին Շողակաթ ալ իր աղջկան հետ հետեւեալ կերպով կը խօսակցին) .

— Մայր իմ , ան ի՞նչ լլըճուկ թէյ էր :

— Աղջկան մազերուն ձեւը գիտեցիր . . .

— Իրաւ է . ան ի՞նչ անճանաչ ձեւ է :

— Թէյի գաւաթներուն պնակները ամենքն ալ ճաթած էին :

— Ադ բանը մի՛ մեղադրեր , աղջիկս , ամուսնոյն գործը քիչ մը աւրած է . նորը չեն կրնար առնել , ի՞նչ ընեն :

— Փուճ խօսքեր , մայրիկ , պարզ ճերմակ թէյի գաւաթներէն կառնեմ տէ՛ հիւրի դիմաց ատանկ ճաթած պընակներով թէյ չեմ հաներ դի :

Այսպէս է ահա մեծ մասամբ մեր տիկնանց իրարու հանդէպ ունեցած քաղաքավարութիւնը : Շիտակը , տգեղ բան , այնպէս չէ՛ , աղնիւ ընթերցուհի :

ԱՆԱԿՆԿԱԼ ՊԱՏՈՂԱՆԻՄ ՄԸ

Անդղիոյ Մանչէսթըր քաղաքի վաճառականներէն մէկը՝ շոգեկառքով ճամբորդելու ելած ատեն՝ հետը տանելիք բաներուն համար փոխադրութեան ծախք չի վճարելու միտքով , զանոնք իբրեւ բեռ չէր տաներ , այլ միշտ ծրարներ կը կազմէր : Այս կծծին վերջերս օր մ'ալ թեւորուն տակ մէկ մէկ ծրար առած շոգեկառք կը մտնէ . ու դիտնալով որ երկաթուղիին ընկերութիւնը ըստ կանոնի ծրարներէն մէկուն համար վարձք պիտի պահանջէ , այդ վարձքն ալ չի տալու համար կառքին մէջ դէմը նստող Անդղիացիի մը կը դիմէ .

— Պարո՛ն , դուք այս շոգեկառքով պիտի ճամբորդէք :

— Այո՛ ,

— Ձեր քովը ծրար , պայուսակ եւ այլն չունիք , այնպէս չէ՞ :

— Ոչ , չունիմ , ի՞նչ կայ :

— Ուրեմն խնդիր մը պիտի առաջարկեմ ձեր ազնուութեան :

— Ի՞նչպէս .

— Յայտնի է որ ճամբորդի մը քով

եթէ երկու ծրար գտնուի, մէկ ծրարին համար հարկ է վճարել.

— Այո.

— Արդ, քանի որ ձեր ձեռքը ծրար չի կայ, սա երկու ծրարներէս մէկը քովերնիդ դրէք, զոր պաշտօնեայն ձերը պիտի կարծէ, ու երբ տոմսակնիդ ցուցնէք, ծրարն ալ իբրեւ ձերը կը ներկայացնէք:

— Լաւ. բայց ես տոմսակ չունիմ.

— Տոմսակ չունիք մի. . . ուրեմն ի՞նչպէս կրնաք ճամբորդել.

— Ես կրնամ ճամբորդել:

— Բայց անկարելի է, առանց տոմսակի երթեւեկել անկարելի է:

— Ինծի համար անկարելի չէ, որովհետեւ երկաթուղոյն տնօրէնը ես եմ:

— Ա. . . դուք մի. . . ըսելով՝ կծծի վաճառականին բերանը բաց կը մնայ, անգիտութեամբ տնօրէնին պատահած ըլլալուն համար. բայց գործը այսչափով չի լինար. երկրորդ ծրարին համար կը վճարէ ըստ կանոնի պէտք եղածը եւ նոյնչափ մըն ալ իբրեւ տուգանք:



Երկու կանանց խօսակցութիւն

— Կէսսինէ հանըմ, ութը տասը օր է սա դիմացի տուներնիդ թախըմ մը էրիկ մարդիկ կը ժողվըին կոր. մինչև իրիկուն գլուխդին ծռած ի՞նչ կընեն:

— Ես ալ քեզի պէս մէսաք ընելով Աստիկիս հարցուցի նէ արմատաւուն է ըսաւ:

— Արման տուտուն ո՞վ է:

— Արման տուտուն չըսի. արմատաւուն, այ մարդիկը քէօք փնտռելու ելեր են:

— Քէօք մի. . . ինչի՞ քէօք. աճապար լը՞նք քէօքիւ է նէ մենք էքէյի ունէինք:

— Չէ, չէ, անոնց փնտաւոր անանկ չիչէկի զավգավթի քէօք չէ, լեզուներնուս քէօքը կը փնտռեն կոր եղեր:

— Տէրողորմեա, սա ալ չէի լսեր. էյ լեզունուս քէօքը հաւի պէս սաւթներով գըլուխնիս ծռած փնտաւոր ենք. այնպիսի առջին բերանդ աղէկ մը կը բանաս՝ լեզույիդ քէօքը պողպաղիք ծակին մէջ բէք աղւոր կը տեսնաս:

— Աչկի խաղայ կնիկ, մօլոր կը հասկընաս կոր. անոնց փնտաւոր՝ բերններնուս մէջ ունեցած լեզուներնուս քէօքը չէ, Աստիկըս ըսաւ քի՛ մեր հայճա խօսքերը ու խօրանքները՝ աշխարհքիս մէջ գտնուած միլլէթներուն մամը, քէօքը կը սեպուի կոր եղեր. Ինկիլիզէն, Տալեանճան, Ֆոանկսըզճան, Մօսկօֆճան, Հօռոմճան, Դօռոմճան, Նէմցէճէն, Իշթէ Թէքմիլ եթմիշ իբի պուշուգ միլլէթին լեզուները մեր լեզույէն ելեր են տէ. .

— Քա սա ի՞նչ բաներ կըսես կոր քուրուկ, մենք ալ սանքի մարդ ենք տէ աշխարքիս երեսը բա՞ն գիտենք:

— Հա՛, ես,

— Պէլքի ան սէպէպովն է քի օյտու օւլալը աս լեզուներուն պէս խառնուած լեզույով կը խօրանենք:

— Ո՛վ գիտէ, իշթէ հիմա ալ մերինին քէօքը գտնալու ետեւէ են ինկեր:

— Կրեսա ամա բուրուկ, ի՞նչ ալ խելացի մարդիկներ ունինք մէջերնիս տէ, խապար չենք: Պարէ կը գտնա՞ն կոր:

— Աստիկս ըսաւ քի, ամենէն առաջ պէտքի բանը, էն առջի ծնող մարդուն անունին քէօքը ծառք անցունելն է եղեր, ալլա հալէմ՝ ան ալ եախալամիշ ըրեր են:

— Աճապա ո՞ր մարդունն է:

— Ադամինը:

— Անանկ է նէ Աստուած ֆէրասէթնին եւելցնէ:



ԳՐԱԳԱՆՔ ԳՕՃԱ

ԿԻՆԻՆՆԱԿԻ ԳՕՄԵՏԻ ՊԻՐ ԲԵՐՏԵ

(Կէջէն Ախուհոսան)

Էրբ. — Պիւմէմ, պու սալօնա կիր-
մէնիզի իսթէմէմ, իսթէմէմ վէստէլամ.
պուրատա օթուրմագ օլմալ:

Մատ. — Աճայիպ. . . պուրատա է-
վիմիզ տէյիլ մի. աբատա պիր պու սա-
լօնա կիրէր, շու բէնչէրէտէն սօգալա
պագարագ (քէնյէրէյէ կիսէրէֆ) հէմ
հալալանըր հէմ տէ կէչէն տէօնէնի
սէյր իտէրէք էյլէնիւրիւմ:

Էրբ. — (գօղմէսան թոթուպ քէնյէ-
րէսէն պէրույէ ալարագ) Էվլէթ, կէչէն
տէօնէնի սէյր իտէրէք էյլէնիւրիւմ. . .
հիչ պէօյլէ տէ իւթիւ աչըգ եալան ի-
շիտիւմիշ մի տիր. պիզիւմ մատամ բէն-
չէրէտէն հալա ալըր ըմըշ, էյլէնիւր ի-
միշ. պուլար պէնիւմ գուլաղըմ կիր-
մէզ. սիզ ատէթա իհթիյար իլէ իշի բի-
շիւմիշսինիզ. (քէնյէրէյէ տողու) պագ,
պագ, շիմտի տէ գալգմըշ ֆէսիյէն
սագսընըր գօգլայօր. մատամ, պիլիւր-
միսին, պու իհթիյար նէ տէմէք իս-
թէյօր:

Մատ. — Ճանըմ, նէ տէմէք իս-
թէյէճէք, քէնտի հալինտէ պիր ա-
տամ:

Էրբ. — Սիզի պու ֆէսիյէն կի-
պի տաիմա գօգլայաճալըմ, տէմէք իս-
թէյօր. . . հաղըգ մատամ, հաղըգ:

Մատ. — Էրբօլէ, սիզ ատէթա չըլ-
տըմըշընըր:

— Էրբ. — Էվլէթ մատամ, տէլի
տիվանէ օլույօրըմ, աղըմ զիհնիւմ բէ-
րիշան օլու. . . իշթէ ոօն տէֆա օլա-
րագ սիզէ սէօյլէյօրըմ, պու սալօնա
կիրմէյէճէքսինիզ:

— Մատ. — Ամա սիզտէ արթըգ
պաշըմ աղըթըյօրընըլ. ատէթա գա-
պագ տատը վէրիյօրընըլ:

Էրբ. — Էվլէթ, տամաղընըլա հօշ
կէօրիւնմէտիկիմտէն գապագ տատը վէ-
րիյօրըմ, տէյիլ մի:

Մատ. — Պէն սիզին մէֆուստը
սէօյլէրինիզի տիննէյէմէմ:

Էրբ. — Մէֆուստը սէօլ, էօյլէ եա.
սիզ օնուշա իսթէտիզինիզ կիպի մու
հապպէթ իթմէլի իտինիզ տէ պէն տէ
կէօլ գաբայըպ աղըմը աշմամալը ի-
տիւմ. տէյիլ մի. . . մատամ, եթիշիւր
հէր նէ գատար սապր իթտիւմ իսէ եթ-
թիշիւր:

Մատ. — Պու սէօյլէրինիզէ ասլա
էհէմմիյէթ վէրմէյէրէք արթըգ տին-
նէյէմէմ սիզի. (հիսսէքիլ կիսէր)

Էրբ. — Եա, պէնի տիննէմէզսին,
էօյլէ մի. ֆագաթ պուսուշ չարէսի.
պիր չարէսինի տիւշիւնմէլի. (սիւշիւնիւր)
նէ եաբայըմ եա րապպիւմ, հա, էյի
հաթըմա կէլտի, թամամ, պու եօլ ը-
լա էմէլիմէ նայիլ օլապիլիւրիւմ. էլպէթ-
տէ էր եա կէճ պուշարըն պիրպիրէ-
րիյլէ կէօրիշիւլըլէրինի եագալալաճա-
ղըմ. . . ահ, հապիւ իհթիյար. էվիմին,
նամուսումուն պէրպատընա, մահվը-
նա սէպէպ օլուուն, տէյիլ մի, բէք ա-
լա, շիմտի կէօրիւրսին. (գաբույա տող-
ու) ձիօվաննի. . . ձիօվաննի. . . նէր-
տէ գալտը եա. . . ձիօվաննի:

ԻԻԶԻՆՆԱԿԻ ՄԷՃԼԻՍ

Էրբօլէ, ձիօվաննի:

ձիօ. — (տղարսան) Կէլտիւմ, միւ-
սիւ, կէլտիւմ. (կէլիւ):

Էրբ. — Իքի սաաթտըր սէնի պէք-
լէյօրըմ, սէսիւմի իշիթմէտին մի:

ձիօ. — Իշիթտիւմ, լաքին աշաղտա
իշիւմ վար ըտը:

Էրբ. — Բէք ալա, շիմտի պէնի
տիննէ:

ձիօ. — Տիւննէյօրըմ:

Էրբ. — Գաշ սէնէ տիր քի հըզ-
մէթիւմտէ պուլունույօրըն:

ձիօ. — Պիւմէմ աճա, կալիպա օ-
գատար վագըթ օլմալտըր:

(Տէպալի)

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Գ

Հանդիսանալ 57րդ Տարի

ճոխ և օգտաշատ պարունակութեամբ

Տարեկանն է 10 Քր. — 4 րուպի.—
2 աօլար :

Հասցէ

Ռէսաֆսիօն քր լա ռէվիս Գազնապէս

Սէն Լ. զար

(Իթալի)

Վէնիս

«ՀԱՆՂԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ»

Ուսումնաբերք

Տարեկան 10 Քր. ոսկի, Վեցամսեայ 6 Քր.

Վանիսիկ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը :

Հայ—Գրական յօդուածներէն զատ՝ ճշգրիտ տեղեկութիւն կը տրուի հայ—գրականութեան, պատմութեան, ևայլն նկատմամբ ամէն ամիս ելած նոր հրատարակութեանց վրայ : Նոյնպէս քննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ տրուած կարեւոր լրերու վրայ :

«Աղգային լրագրաց բովանդակութիւնն, թղթակցութիւնն, ծանուցում, ևայլն :

Խմբագրութեան զրկուած ամէն գրքերու վրայ՝ քննադատական համառօտ տեղեկութիւն տալը պիտի շարունակուի :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՒ

Հանդէսի

Խիստ դիւրամատչելի գինով կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակադրուիս, պահարան, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ և պրօշիւններ :

Քաղաքէն եկած յանձնարարութիւնք ալ ճշդութեամբ և փութով կը կատարուին :

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ



ՍՕՖԻԱ ՔԱԶԱՔԻ

ԴՈՒՆԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Երաշխատեալ

II. ՊԱՐԳԵԻՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50.000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25.000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ .

1898 Վեկա. 10ին 1500 թիւեր

1899 Յնվր. 7ին 1500 "

" Փետր. 4ին 2000 "

" " 26ին " "

" Մարտ 19ին " "

" Ապր. 12ին 16.000 "

Մէկ ութերորդ տոմսակին գինն է,

Ոսկի Լէվ Սթ.

Ա. ամսոյ համար 1 25

Բ. " " 1 75

Գ. " " 2 87 1/2

Դ. " " 3 62 1/2

Ե. " " 2 87 1/2

Զ. " " 2 2 1/2

14 40

Ասոնցմէ զատ կը գտնուին նաեւ քառորդ, կէս և ամբողջ տոմսեր, որոնցարժէքները համեմատաբար կաւելնան :

Դնելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել սեղանաւոր Տ. Սարգիս Գաբրիէլեանի, Վառնա, Մուսալլա :



ԳՈՒՇԿ

Ա. ՊԱՐԱՅԻ

Կամ Զուարճալի Բաղդադցոյ
Ընտանեկան

Երկուսն ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով դիմել խմբագրութեան :

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ

Печантита «Взаимность» — Варна.